

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2015-2016թ. ուստարում կատարած աշխատանքների մասին

Վայոց ձորի մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական և 36 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան: 2 ավագ դպրոց և 1 կրթահամալիր գործում են ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, որոնցում սովորում է 317 աշակերտ: 5 դպրոցներ գտնվում են բարձր լեռնային բնակավայրերում:

- Մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 16, որտեղ սովորող աշակերտների թիվը 360 - է:
- 50-100 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 13, որտեղ սովորողների թիվը 991 – է:
- 100 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 21

Համայնքների ղեկավարների, մարզային վիճակագրական ծառայությունների և ՔԿԱԳ-ի բաժինների հետ համագործակցելով տարվել է դպրոցահասակ երեխաների հաշվառում: 2015-2016 ուստարում այն կազմել է 6373 աշակերտ: 1-ին դասարան են ընդունվել 573 երեխա: Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Կրթության վարչությունը սերտորեն համագործակցում է իրավապահ մարմինների, մարզպետարանի կանանց, ընտանիքի և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ: Կատարված աշխատանքի արդյունքում խիստ նվազել է անչափահասների կողմից կատարվող իրավախախտումները: Ոստիկանության կողմից հաշվառման է վերցված ընդամենը երեխաներ չկան:

Մարզի 50 դպրոցներում սովորում է 6373 աշակերտ, որից 797-ը ավագ դպրոցներում և կրթահամալիրում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 81 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2, Ջերմուկի թիվ 1, Վայքի հիմնական և Ջերմուկի թիվ 3, Շատինի միջն. դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար:

Բացվել և գործում են 24 նախակրթարաններ, որոնցից 14-ը դպրոցներում:

Դպրոցներում գործող նախակրթարաններում ընդգրկվել է 162 երեխա:

Դպրոցներում աշխատում են 1083 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (մոտ 80%-ը), մնացած 232-ը՝ միջնակարգ մասնագիտական:

- Ուսուցիչ - աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1:6:
- Դասարանի միջին խտությունը 13,5 - է:
- Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 16,1 ժամ:

- Մարզում գործում է 17 մանկապարտեզ 44 խմբով, որոնցում ընդգրկված է 1044 նախադպրոցական տարիքի երեխա: Նրաց հետ աշխատում են 85 դաստիարակներ:

Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով ձևավորվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր կառավարման խորհուրդներ, որոնց անվանական կազմը 2016թ. մարտի 4-ին հաստատվել է Վայոց ձորի մարզպետի N 26 որոշմամբ:

Հինգ դպրոցներում (Ջերմուկի թիվ 1, Հերմոնի հիմնական, Ջերմուկի թիվ 3, Չառիթափի միջնակարգ դպրոցներ և Վայքի պետական վարժարան) սահմանված կարգով անցկացվել են գործադիր տնօրենի պաշտոնի համար մրցույթներ և ընտրվել են նոր տնօրեններ:

Հաջողությամբ իրականացվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4 ընթացիկ դասարանների երեխաները դպրոցում ստանում են սնունդ:

Սահմանված կարգով կազմակերպվում են նաև դպրոցներում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթները: Ուստարվա ընթացքում անցկացվել է ուսուցչի թափուր տեղի համար 23 մրցույթ:

ԴՏՀՏԾՀ-ի կողմից մարզի 1-ին դասարանների աշակերտներին հատկացվել են ուսումնական պլանշետներ: Դրանց օգտագործման նպատակով վերապատրաստվել են 1-ին դասարաններում պարապող բոլոր դասվարները: Մարզի հանրակրթական դպրոցների մեծ մասը՝ մոտ 80%, վերանորոգված են: Բոլոր դպրոցներում լուծված է ջեռուցման խնդիրը: 19 դպրոցներ ջեռուցվում են գազի լուրջ կաթսայատան միջոցով, մնացածը՝ էլեկտրական ջեռուցիչներով: Մարզի բոլոր դպրոցները ապահովված են համակարգիչներով, գործում է ինտերնետ կապը: Ներդրվել և աշխատում է Dasar.am ծրագիրը: Սակայն որոշ դպրոցներում կապի խափանման, ուսուցիչների թերացման պատճառով ծրագրում մուտքագրման աշխատանքները երբեմն ընդհատվում են և գնահատվում ցածր տոկոսով: Հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ լուծվել է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը, վարձավճարները հավաքագրվել են 99%: Դպրոցներում հաջողությամբ ներդրվել է շախմատ առարկան, բոլոր դպրոցները ապահովված են անհրաժեշտ գույքով և դասագրքերով: Մարզի քաղաքային 5 դպրոցներում ներդրվել է <<Ազգային երգ ու պար>> առարկան:

Վարչությունը սահմանված կարգով համագործակցելով ԿԳ նախարարության հետ անցկացրել է տարվա լավագույն <<ուսուցիչ>>, <<տնօրեն>>, <<դաստիարակ>> մրցույթները:

Փետրվար-մարտ ամիսներին անցկացվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Մարզային փուլին 16 առարկաներից մասնակցել են 7-ից 12-րդ դասարանների 606 աշակերտներ, որոնցից 42-ը ստացել են հանրապետական փուլին մասնակցելու իրավունք: Հանրապետական

փուլին մասնակցած աշակերտներից 7-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի, որից 3-ը 1-ին կարգի:

Մարզի դպրոցները մասնակցել են զանազան հանրապետական մրցույթների: Դպրոց-կենտրոնների միության կողմից հայտարարված «Հայոց պետական խորհրդանիշները» մրցույթում Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցը հաղթող է ճանաչվել և արժանացել ՀՀ Նախագահի առաջին կարգի մրցանակի: Նույն դպրոցը «Նորագույն տեխնոլոգիաների օգտագործումն ինժեներական մասնագիտացումներում» խորագրով մրցույթում արժանացել է ՀՀ վարչապետի առաջին կարգի մրցանակի:

Ժամանակին լրացվել, գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացվել միասնական քննությունների մասնակիցների դիմում-հայտերը: Հայտավորվել են բուհերի շուրջ 200 դիմորդներ, որոնք միասնական քննություններ են հանձնել Եղեգնաձորի ավագ դպրոցում տեղակայված քննական կենտրոնում: Դպրոցներում սահմանված կարգով անցկացվել են 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունները: Մարզային ենթակայության դպրոցներում 9-րդ դասարանն ավարտել են 424, իսկ 12-րդ դասարանը 370 շրջանավարտներ: 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններն ավարտած աշակերտների ավարտական փաստաթղթերը (հավաստագիր, վկայական, ատեստատ) ստացվել և բաշխվել են դպրոցներին:

Անցկացվել է հերթական ատեստավորման համար 115 ուսուցիչների վերապատրաստման դասընթացները որոնք կազմակերպվել են Կրթության ազգային ինստիտուտի Վայոց ձորի մասնաճյուղում: Այդ ուսուցիչների ատեստավորումը կանցկացվի աշնանը:

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել է «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական և ընթերցանության մրցույթները, ինչպես նաև «Ամենախելացին» հեռուստատեսային մրցույթի ընտրության փուլը:

Վայոց ձորի մարզը համագործակցում է Ռուսաստանի Դաշնության Արխանգելսկի և Նիժնի Նովգորոդի նահանգների հետ: Այդ համագործակցության շրջանակներում Նիժնի Նովգորոդի մարզի կողմից Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցում կատարվել են վերանորոգման աշխատանքներ: Իսկ Արխանգելսկի մարզի կողմից Մալիշկայի թիվ 2 միջն. դպրոցին հատկացվել են սեղան-նստարաններ: Տարվա ընթացքում կազմակերպվել են պատվիրակությունների փոխայցելություններ: Մարզի 8 դպրոցներում ինֆորմացիոն տեխնոլոգիաների միության կողմից ներդրվել են ռեբոտաշինության լաբորատորիաներ, որը մեծ խթան կարող է հանդիսանալ աշակերտների տեղեկատվական գիտելիքների ստեղծագործական կիրառման ուղղությամբ:

Ուսառւմնական պարապմունքներն ավարտվել են մայիսի 27-ին և այդ օրը դպրոցներում անցկացվել է «Վերջին զանգ» միջոցառումը, որին

մասնակցել են նաև մարզպետարանի աշխատակիցներ և ՀՀ բանակի սպաներ:

ՀՀ կառավարության և Վայոց ձորի մարզպետարանի աջակցությամբ մարզի սոցիալապես անապահով, բազմազավակ, գոհված զինծառայողների ընտանիքների 195 դպրոցահասակ երեխաներ հանգստացել են Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

Մարզի դպրոցներում բարձր հիմքերի վրա է ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը: Բոլոր դպրոցներն ապահովված են ուսումնական զենքով: Կրակային պատրաստության համար սահմանված գրաֆիկով մարզում տեղակայված զորավարժարանում աշակերտների համար անցկացվել է հրաձգություն ավտոմատ զինատեսակից: Ժամանակին անցկացվել է <<Դիպուկ հրաձիգ>> մրցույթը և <<Կորյուն>> ռազմամարզական խաղը դպրոցների միջև: Առանձնակի ոգևորությամբ են անցնում հայոց բանակի հաղթող զինվորների մեծարմանն ու խոնարհումին նվիրված դպրոցական և մարզային միջոցառումները: Մարզի մի շարք դպրոցներում կազմակերպվել են պատանի երկրապահների խմբակներ, որոնց անդամները մասնակցել են երկրապահի օրվա, մայիսյան բոլոր հաղթանակների տոներին նվիրված միջոցառումներին:

**Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ղազարյան**

Ա.